

## ԱՐՏԱՍԱՐՄԱՆԵԱՆ ՔՐՈՒԻԿ

Պանամալի ընկերութեան գործը

Ո՞ւմ չէ լալտնի ֆրանսիացի Ֆերդինանդ Լեսսեպսի անունը՝ Ո՞ւմ չէ բարենի որ Լեսսեպս որին իւր հալքենակիցները հպարտութեամբ կոչում են Մեծ Ֆրանսիացի—անխօնիլի կերպով կապել է իւր անունը XIX դարուա հրաշք-ստեղծագործութիւններից մինի, ալն է Սուեցի կանալի գլուխ բերելուն հետը։

Դժբաղդաբար Լեսսեպսի անունը կապւած է մասաւունակ ան տիտուր անցքերի հետ, որոնց տեղիք տւեց նրա երկրորդ՝ աւելի մեծ, աւելի լանդաւուն ձեռնարկութիւնը—այն է Պանամալի ջրանցքի փորելը։

Պանամալի կանալի փորելը չը լաջողւեց և մի մեծ սկանդալ, մի կատարեալ սկանդալ նու ճիշճութեան մասնաւութիւնը արեւ մուտքին։

Ֆերդինանդ Լեսսեպսը ներկալում 87 տարեկան պատկանելի հասակում է, ծննել է 1805 թվի նոյեմբեր ամսին Պարիզի մօտ գտննուղ Վերսալում, Սրիտասարդութեան օրերորդ պետական ծառադրութեան մէջ էր, վարելով փոխ կոնսուլի, կոնսուլի և ապա դեսպանի պաշտօն Մարդուդում, Ամուսնեան իրան ամբողջապէս նվիրում է Սուեցի ջրանցքի փորելուն որ և աւարտում է փառաւորապէս 1869 թվին, Ամուսնանում է երկրորդ անգամ 1862 թվին մի կրէօլունու հետ, որին պատահել էր Խամավլում մի երեկովթի, Ալդ ամուսնութիւնը լինում է շատ բեղմնաւոր, Լեսսեպսը ունեցաւ իւր երկրորդ կնօջից 11 երեխակ և ալժմնրա մեծ որդին—Շառլ, որը նմանապէս Պանամալի ընկերութեան կառավարիչներից մէկն է—52 տարեկան է, իսկ ամենափոքրիկ աղջկը 7 տարեկան է։

1879 թվից սկսած Լեսսեպսը ձեռնարկից Պանամալի գործին և ժողովուրդին չը խրանեցնելու համար, վարեց ալս նոր գործում Սուեցի գործի նման, ալմինքն առաջ բաւական լալտարարեց ալդ նոր գործի համար 300 միլիոն ֆրանկ և ապա առաջ ու առաջ գնալով ալդ գումարը

հասցրեց մօտ մէկ ու կէս միլիարդ ֆրանկ առռելի գումարին և դէպ ասենք որ մի քանի մասնադէտների կարծիքով Պանամակի գործը զլուկ քերելու համար առնւազն հարկաւոր է երեք ու կէսից չորս միլիարդ ֆրանկ:

Լեսեպսի Սուեցեան ձեռնարկութիւնը աջողւեց. ընկերութեան մասնակցողները ստացան և շարունակում են տոանալ մնամեծ օգոստներ, իսկ ինքը Լեսեպսը, բացի նիւթեական շահից, ստացաւ իւր երախտագէտ հայրենակիցների կողմից Մեծ Ֆրանսիացու մականունը և դառաւ պատմական և աշխարհաճակ մի անճնաւորութիւն:

Պանամակի ձեռնարկութիւնը—հանդիպելով բազմաթիւ զժւարութիւնների՝ չը լաջողւեց և ահա նոյն ֆրանսիացիները Լեսեպսին—պատւոր լեզէնի ասպետին, —դատի են կանչում:

Մեծ ծերունին տեղիկութիւն չունի անցքերի մասին. նրա ընտանիքը թագցնում է նրանից իրականութիւնը՝ նա ապրում է Լա-Շենէ ամարանոցում, նրան հաւատացրել են թէ իւր որդիներից մէկը Բորդո քաղաքում է, մինչդեռ նա Սուդանումն է կուտում. Մերունին ամբողջ ժամանակ կարդում է, քիչ խօսում, հիւանդ է և բոլորավին խուլացել է:

Մի ամփոփ գաղափար տւած լինելու համար, զնենք ալսանդ ալն համեմատական աղիւսակը որից պարզ երևում է թէ ինչքան շահ է տեսլ մինչ օրս Սուեցի ձեռնարկութիւնը և ինչքան վնաս է պատճառում Պանամակինը,

(Տես լաջորդ երկու էջերը)

## ՄՈՒԵՑԻ ԶԵՐՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Երշահանաժաների արժէքները,		Դրամականական համար. Տրուստի.	Բղբ. արժէքները 10 նոր. 1892 թ.	Դրամականական իրականութիւն,			
400.000 արդիա	500 ֆ.	200.000.000 ֆր.	2.623 ֆ. 75 տան.	1.019.500.000 ֆ.	—		
120.000	»	270 »	32.400.000 »	716 » 50 »	85.980.000 »	—	
120.000	»	100 »	12.000.000 »	139 » 25 »	16.710.000 »	—	
400.000	»	85 »	34.000.000 »	95 » 50 »	38.200.000 »	—	
333.333 օրդիդացիա	5%	300 »	99.999.900 »	802 » 50 »	200.833.132 » 50 ».	»	
15.152	»	3% 1 ամբ. 330 »	5.000.160 »	475 » 50 »	7.201.776 »	—	
57.874	»	330 »	19.098.420 »	475 » 50 »	27.519.687 »	—	
75.000	»	— 2 ամբ. 380 »	28.500.000 »	471 » 25 »	35.343.750 »	—	
60.000	»	— 410 »	24.600.000 »	471 » 25 »	28.275.000 »	—	
60.000	»	— 420 »	25.200.000 »	471 » 25 »	28.275.000 »	—	
			480.798.480 ֆր.				
			Հիմնադրմանը				
			1.547.840.745 ֆ. 50 ս.				
			1.635.425.745 ֆ. 50 ս.				
			480.798.480 »				
			1.117.625.000 »				
			1.154.667.265 ֆ. 50 ս.				

## ՊԵՐՎԱՅԻ ՏԵԽՆԱԿԱՆ ԾՐԿԱԿԱՆ ՀԾՈՒԹՅՈՒՆ

		ԴՐՁԱՆԱՀԱՆՑԻՑԻՐԻ		ԴՐԱՄԱԳԻՎԱՆԱՀԱՆՑԻՐԻ	
	արժեքը:	միջանցիկ գումարը:	միջանցիկ գումարը:		
600.000	արդյունաբանական գումար	500 ֆ.	300.000.000 ֆ.	19.5m.1892 միջանցիկ գումարը	19.5m.1892 միջանցիկ գումարը
250.000	արդյունաբանական գումար	5%	437 n 50 n.	109.375.000 n —	21 ֆ. 62 n.
600.000	n	3%	285 n — n	171.000.000 n —	32 n — n
459.762	n	4%	333 n — n	153.100.746 n —	19 n 50 n
458.802	n	1 արդյունաբանական գումար	450 n — n	206.460.900 n —	20 n 75 n
258.887	n	2 n	440 n — n	113.910.280 n —	25 n 25 n
89.802	n	3 n	460 n — n	41.308.920 n —	25 n 75 n
849.249	n	360 n — n <sup>1)</sup>	236.996.945 ֆ. 05 n.	85 n 65 n	6.536.896 n 75 n
357.699	n	105 n — n	37.558.395 n —	82 n 87 n	6.802.501 n 50 n
					72.738.176 n 85 n
					29.642.516 n 13 n
					— 169.511.903 ֆ. 23 n.
					1.369.711.186 ֆ. 05 n.
					169.516.903 n 23 n
					— 1.200.194.282 ֆ. 82 n.

<sup>1)</sup> Այս պատրիմոնի վիճակախնդիր օբյեկտականություն մէջ մասը մնաց անվաճառ։

Այս թւերի պերճախօս եղբակացութիւնը ակս է.

Շրջահանութիւնների Արժէքը ներկակ

գումարը

Կուրսով

Սուեց 480.798.480 ֆ. 1.635.465.745 ֆ. շահ 1.154.667.265 ֆր.  
Պահամա 1.369.711.186 " 169.516.903 " Փաստ 1.200.194.282 "

Առաջին ձեռնարկութիւնը, ուրեմն տակ է շահ մօտ 1.155 միլիոն ֆրանկ, իսկ երկրորդը վեաս աւելի քան 1.200 միլիոն ֆրանկ.

Այս թւերի վրակ աւելացնենք այն հանգամանքը, որ այս վեասի տուժողները մեծ մասսամբ միջին կամ նորին իսկ միջին կարողութիւնից պակաս տէր մարդիկ են, որոնք իրանց սահսիմ սանտիմի վրա հաւաքածները, կամ ինչպէս ֆրանսիացիք են ասում, իրանց արած էկոնոմիսմները—տևել են Պահամավի թղթերին այն լուսով թէ ոնեննալու են տարեկան ակս ինչ օգուտը կամ ըստ իրանց՝ ակս ինչ ռենտա.

Վերջին պարզեատու վիճակախաղ փոխառութիւններից կատու ընկերութեան գործերը սկսեցին կադել և 1888 թ. ընկերութիւնը օգնութիւն խնդրեց պարզամնատից, Օգնութիւնը մերժեց և Լեսաեպսը խնդրեց կառավարիչներ նշանակել գործը առաջ տանելու համար նշանակված անձանց աշխատութիւնը փոխառութիւն անելու—Պահամավի գործը առաջ տանելու համար—ըլ լաջողւեց. Ապա դատարանը մարդիկ նշանակեց ընկերութեան գործը վերջացնելու համար:

Պահամավի գործի ներկալ տիսուր դրութեան և անցքերի պատճառը ակս վերոկիշեալ հարիւր միլիոնների կորուստն է: Իսկ երր շուկաի պէս խարդախութիւնների և կաշառակերութիւնների լուրեր էլ տարածմեցին—գործը ստացաւ աւելի ևս սուր կերպարանք, մանաւանդ որ ներկալ հանրապետութեան հակառակորդները և թշնամինները այս գործին տվին նաև քաղաքական աստառ, աշխատելով ստեր զցնէլ թէ հանրապետուկանների վրա և թէ հանրապետութեան վրա առհասարակ: Խսկապէս Պահամավի ընկերութեան կառավարիչների դէմ դատ բաց անելու օրինական պայմանաժամը (որ է երեք տարի) անցել է: բացի մի մեղադրական կէտից որը հիմնամ է վերջին փոխառութեան մէջ նկատած ինչ ինչ անկանոնութիւններից վրա, — փոխառութեան որի շը գուրս գալու պատճառով փողերը ետ էին տրեւլ: Միս մեղադրական կէտերի համար դանդատողները կարող էին քաղաքացիական դատ բաց անել, որի հետեւանքը չէր կարող լինել մեղադրողների բանդարկութիւն, ազ միմիան դրամի հատուցում:

Երբ Լուքէի մինիսարութեան արդարադատութեան անդամ մինիստր Ռիկառը թուլլուտութիւն տեղ Պահամավի ընկերութեան կառավարիչների դէմ դատ բաց անելու—հանդէս եկան զանազան լրագրերի հրապարակական դրաբարութիւններ և մեղադրութիւններ ուղղված ոչ միան մէկի կամ երկուակ դէմ, ազ տասնեակների դէմ և նորին իսկ անպահների, որոնք կամ պատգամա-

արներ են և կամ սենատորներ լրադրական ալս մերկացումները, որոնց ձգութեան որ սաստիճանի վիճելը անլատ էր և կարօտ ապացուցների ունեցան իրանց պաշտպանները պարզաննատում լանձին աջակողմնանների:

Որումքը պալթեց 21 նումերերի (ն. տ.) պատգամաւորների ժողովի նստին և հրացանաձիգներից առաջինը, ալսպէս ասած, եղաւ Դըլահէ (Delahaye) միապետական երեսփոխանե.

Սա իւր մի երկար ճառի մէջ պահանջեց որ մի լանձնաժողով նշանակւի Պահամալի գործի վրա արևս գցելու համար 1888 թվին, ասաց նա ի միջի ալսոց, Ֆրանսիալում երկիւղալի լուրեր էին պատում Պահամալի գործի մասին և նոյն իսկ ակնարկում էին սաստիկ խարդախութիւնների վրա, Ֆերդինանդ Լեսսենպը մի պատուա արեց Ֆրանսիալի մէջ, բաց դա չ'օգնեց մի համակրութիւն առաջ բերելու համար, Ան ժամանակ մի ելմտապէտ—ֆինանսիստ — միտք ունեցաւ պարզեաւոր մի վիճականութիւն կազմելու... ալդ ելմտապէտը գործը չաջողացնելու համար պահանջեց Պահամալի ընկերութեան կառավարիչներից հինգ միլիոն ֆրանկ պարզամնատի բոլոր այն երեսփոխների ձախները գնելու համար, որոնք ծախու էին, Ամեն մի երեսփոխան ունէր իւր գինը նախած իւր աղջեցութեան... Երեք միլիոն ֆրանկ բաժանած է ալս ձևով 150 պատգամաւորների մէջ...

— Անունները տէք, լւում է ձախակողմնաններից:

— Սպասեցէք քննութեան, պատասխանում է Դըլահէն և ասկ նոր ակնարկութիւններ անելով Ֆլոկէի<sup>1)</sup> և Ֆրելիխնէի<sup>2)</sup> ձեռքերով կատարած իր գեղջուամների վրա, աջակողմնան պատգամաւորըն, որը ի դէպ ասած թունդ բուշանժական էր՝ շարունակեց։ Ալատեղ կան հարիւրից աւելի պատգամաւորներ որոնք փող են վեր առել։

Ժաղովականների մեծամասնութիւնը լուզւած է։

Ֆլոկէ (նախագահ). «Դուք չէք կարող ձեր պաշտօնակիցներից աւելի քան հարիւրին աղջպիսի ծանր կերպով մնջադրել առանց անունները տալու Տէք անունները. ես հրամալում եմ որ անունները տաք»։

— Դըլահէ՝ Քննութեան սպասեցէք։

Տեղի է ունենում մի աննկարագրելի խառնաշփոթութիւն, աղմուկ, գուռում, գոյշին, դարբացած դէմքեր, սպառնալի շարժումներ, Ապա մի քանի փոխադարձ առարկութիւններից կետու Ֆլոկէի և Դըլահէի մէջ մինհատրութեան զլուխը — լուրէն լաւտնում է թէ ինքն էլ ընկերանում է քննութեան պահանջման, ժողովի միաձան հաւանութեամբ ընտրաւմ է մի քննիչ լանձնաժման, ժողովի միաձան հաւանութեամբ ընտրաւմ է մի քննիչ լանձնաժման աղջուամներից բաղկացած, իոկ Բրիսոնը նախագահ։

<sup>1)</sup> Նախագահ ներկալ պատգամաւորների ժողովին

<sup>2)</sup> Թէ ներկալ և թէ շատ նախորդ մինհատրութիւնների զինուորական մինհատրը.

Ակսպիսով ստեղծուամ է մի նոր ատեան, որին լանձնուամ է Պահամալի գործի վրա լուս սփռելու զուգընթաց դատաստանի հետ, որը իւր կողմից դատի էր հրավիրել Ֆերդինանդ Լեսսեպսին, բառոն Կոստիկին, Մարիուս Ֆոնտանին և Լիֆելին, Պահամալի ընկերութեան ալդ զլխաւոր կառավարիչներին, որոնք մեղադրուամ էին «խարդախ միջոցներ գործ դնելում հաւատացնելու համար գործին չոճնեցող մի վարկի մասին, փոխառութիւններից զոյցած գումարները վատնած լինելուն» և ալլու»

Ընթերցողը իւսու կը տեսնի թէ ինչ զժարութիւններ առաջ բերեց պարլամենտի ձեռքով ընտրուած քննիչ լանձնաժողովի ընտրութիւնը, որը նշանակելուց և եթ—մկնեց իւր մօտ հրաւիրել զանազան անձանց ցուց-մուճքները լսելու համար»:

Յանձնաժողովի առաջին նիստին լսած վկարութիւններից ամենահետաքրքրականը և նշանաւորը եղաւ Դրահմէինը, որոնցից օգտելով լանձնաժողովը համոզւց է<sup>1)</sup> թէ թիեռուէ բանկալին գրասենեակը ստացել է մի հաստ չեկով բառոն Ռախախից (միջնորդ Պահամալի ընկ. կառավարիչների և 26 չեկերով ստացողների մէջ) մի կօլու գումար 3.390.475 Գրանկ, «որը և ետ է տրեմէ զանազան անձանց 26 չեկերով, որոնցից երկուոր մի մի միլիոն Գրանկի, մէկը՝ 475.000 Գ., մէկը՝ 400.000 Գ., մէկը՝ 195.000 Գ., մէկը՝ 150.000 Գ., մէկը՝ 140.000 Գ., մէկը՝ 100.000 Գ., մէկը՝ 50.000 Գ., մէկը՝ 40.000 Գ., մէկը՝ 25.000 Գ., մէկը՝ տասընը քսան հազարի և մէկը՝ 5.000 Գ..»

Հետոց ապահով ասենք որ պարլամենտի լանձնաժողովը մկնեց հրատարակութեան տալ իւր ստացած աեղեկութիւնները, թէ ալս հանգամանքը, որը հակառակում է Գրանսիխական օրէնքի հոգուն քանի որ դատաստանական քննութեան վերաբերեալ մանրամասնութիւնները զարդնի պիտի մնան մինչև դատաստանի օրը և թէ այն հանգամանքը որ պարլամենտի լանձնաժողովը մկնեց մանրամասնութիւններ պահանջել դատաստանի ձեռք բերած տեղեկութիւնները—տեղիք տիքն ընդհարումի մի կողմից դատաստանի միջն, միւս կողմից վշշեալ լանձնաժողովիի—քանի որ վերջինս տքնում էր ձեռք բերել առաջինին պատկանեալ իրաւունքները և թերմս աւելի»:

Լրագրերը բաժանմացին երկու մասերի մէկը պաշտպանելով քննիչ լանձնաժողովի արածը, միւս մասը դատաստանի իրաւունքները:

Ակսպէս թէ անպէս լանձնաժողովը շարունակեց իւր ատեանը հրավիրել ում բարուց էր համարում և հրատարակութեան տալ իւր ձեռք բերած տեղեկութիւնները, և շարս ալլոց նա իմացաւ վկաւ Ռուս-սինեալից թէ իրը բառոն Ռախախիը ստացել է Պահամալի ընկերութիւնից

1) Մանաւանդ որ ինքը թիեռուէն հաստատեց ալդ իրողութիւնը հազորդելով նաև մանրամասնութիւնները և պատրաստականութիւն լանձնել ալդ 26 չեկերը դատարանին.

իննը միլիոն ֆրանկի, թէ իրր ալդ գումարը հշանակւած է ընկերութեան մատեաններում, բաց առանց հաստատող թղթերի. Անուննեան նոր վկավ սաելով ընկերութեան մատեանների գլաւտարարութեանց ծախքի հաշիւը համում է քասն միլիոն ֆրանկի և որ ալդ գումարը բաժանւած է լրագրապետներին և խմբագրապետներին. Վկավի սաելով ստացել են Պտի ժուռնալ թերթը 300.000 ֆ., Տեղագրաֆը<sup>1)</sup> 120.000 ֆ., Գուլուա՛ն 15.000 ֆ., Խաղիկալ՝ 100.000 ֆ., Ֆիզար 500.000 ֆ., Տեղագրաֆ'ի կառավարիչը 120.000 ֆ., Գուլուա՛ինը 30.000 ֆ., Խաղիկալի երկուսը 100.000 ֆ., Եւենեմենտ'ի 50.000 ֆ., Ժուռնալ դէ Կըրա՛ի 40.000 ֆ., Պարիզի 80.000 ֆ.։

Դատարանի և պարլամենտական լանձնաժողովի մէջ խոչ ընդհարումը գնալով ստանում է աւելի որոշ և սուրբ կերպարանք. Մեղադրածների փաստաբանները դիմում են ընդհանուր մի բողոքալ ընդհանուր դատախազ Քենս զը Բուռեպեռ'ին ընդդէմ պարլամենտական լանձնաժողովի բռնած դիրքին և բոլոր տեղեկութիւնների հրապարակ հանելուն. Իրանց բողոքում փաստաբանները ստում են ի թիւս ալլոց «քննութեան անպահման գաղտնի պահելը կազմում է հիմնական կանոն մեր քրէական օրէնքիո և ալճն, Քենս զը Բուռեպեռը որի ձեռքումն է Պանամավի գործը իւր կողմից մեղադրում է զատաստանական քննիչ Պինէին որ սա լավանել էր պարլամենտական լանձնաժողովի առաջ իրան լավանի ալնավիսի մանրամասնութիւններ որ առ ի պաշտօնէ պիտի գաղտնի պահէր քանի որ տեղեկացել էր դրանց առ ի պաշտօնէ. Նոյն ալս ընդհարումը թե էր տևլ Շառլ Լեսոնեպսին, Ֆոնտանին և Կոտտիւսին մերժել պարլամենտական լանձնաժողովի առջենը ներկարականուու. Վերջապէս ալս ամենը արձագանք գտաւ պարլամենտում,

Հասաւ նուեմբեր ՀՀ-ի օրը՝ Պատգամաւորների ժողովում աջակողման Դըլա Ֆեռուոնէ խօսք է ուզում և մկնում ծանրանալ ալն մասնաւոր հանգամանքների վրա որոնք կապ ունին բառոն Ռախնախի մահաւան հնու-

Ֆեռուոնէ՝—պատմում էին թունաւորութեան մասին և նոյն խոկ սպառութեան մասին. Ալս հանգամանքների պատճառով զատաստանի պարտաւորութիւնն էր խուզարկութիւն կատարել և զմռել հանգուցեալի թղթերը. Բացի ալդ զիակը թաղեցաւ չափազանց արագ. Ասում են նոյն խոկ թէ թաղումը կեղծ է եղեւ, թէ բարոն Ռախնախը հիմա էլ ողջ առւղջ է և որ զագաղի մէջ լսկ քարեր էին ածւած. Ալս աճքի առաջ ունենալով կարի անհրաժեշտ է գերեզմանից հանել զիակը և զիազնուութիւն կատարել. (Գուռնակութեան ցոլցեր),

Ռիկառը, արդարադատութեան նախարարը, տալիս է ժողովին նոյն

<sup>1)</sup>) Պատկանող Ֆրենսինէին.

բացատրութիւնները որ տևել էր նախընթաց օրը խուզարկող լանձնաժողովն, ալինքն Ռայնախը թաղւել է—որովհետև բժշկի վկաչականը հասատում էր բառոնի բնական մահը, լակ եթէ խուզարկող լանձնաժողովը կասկած ունի բառոնի սպանութեան մասին—լանձնաժողովը կարող է իւր բիսկով ընդունել աղջիկով մի բանաձև և բառոնի դիազնութիւնը կը կատարէի. Եւ երբ Ռիկառը ակնարկում է ասելով թէ բոլոր ձեսկանութիւնները կատարւել են՝ բառոնի թաղումից առաջ—պատգամաւրների մեջ շփոթութիւն և լուզմունք է արտազատուում. Ռիկառը շարումնակում է ասելով որ «Ռայնախի թղթերը չն զմռւել որովհետև բառոնը մնուել էր առաջ քան ստացել խուզարկող լանձնաժողովին ներկայանալու հրաւերը և ալդ հիման վրա չէր կարող հրավիրւած համարւել, Նուեմբեր 19 ընդհանուր դատախազը խուզարկող քննիչին ազատ կացուցեց գործի առաջ տանելուց, ուստի միմիակն աժմ բաղրգիչ ատենանը իրաւունք ունի գործելուած Պատգամաւրները նորից լուզմունքի ցուցեր են արտազատուում. Եթէ, ամելացնում է Ռիկառը, մի բան ևս մնում է անելու,—դատարանը կը կատարի իւր պարտքը:

Այս խօսքերը առաջ են բերում մնե աղմուկ:

Տեղից վեր է կենում Բրիսսոնը—խուզարկող լանձնաժողովի նախադատի և իւր զարմանքը լաբոնելուց լեռու մինխատրի ասած խօսքերին. (Քանի որ խոստացել էր օգնելու լանձնաժողովին և անկատար թողել իւր խոստամոնքը) շարունակում է, զառնալով Ռիկառին. պ. Մինխատրը պէտք է քրքրէր օրէնքների զննարանը ալ գործի վրա լուս տիրելու համար, քանի որ այդ բանը կարի է պահանջում երկրի կողմից, լակ եթէ նա լարմար օրէնքի կէտ չը դտաւ—բարձրագոյն շաները պահանջում են օրէնքով գնալը. (Գոհունակութեան նշանները).

Ազատ Բրիսսոնը Ռիկառին պարաւմլու մտքով ակսպիսի օրակարգ է առաջարկում. «Ժողովը՝ լաբոնելով իւր համամիտութիւնը պարլամենտական լանձնաժողովին — անցնում է հերթական գործերին».

Հատերի սպասածի հակառակի — մինխատրութեան զլուխը, Լուգէն, լաւտարարում է իսկոն որ եթէ կառավարութեան մտադրութիւնները կասկածի տակ են լինելու—մինխատրութեանը կը մնակ միակն հրաժարական տալը.

Պատգամաւր Մոժանը կամնալով ազատել ամբողջ մինխատրութիւնը բացի ի հարկէ Ռիկառից առաջարկում է լրացնել Բրիսսոնի առաջարկած օրակարգի բանաձևը ակսպէս. պատգամաւրների ժողովը ակտնելով իւր հաւատը մինխատրութեան նաև իւր համամիտութիւնը պարլամենտական լանձնաժողովին — անցնում է հերթական գործերին».

Լուգէն լաբոնեց թէ պահանջում է պարզ բանաձև առանց վշողութեան եղած առարկութիւնների և եթէ չը տացւեց աղջիկով անօրական քւէ ամբողջ մինխատրութիւնը հրաժարական է:

Ներկատ եղող 523 պատգամաւորներից 304-ը տալիս են հակառակ քայլութեան է առաջարկութեան, իսկ Բրիստոնի բանաձեռը ընդունում է 393 քւէով Ապա Լուբէի մինխորութիւնը տալիս է իւր հրաժարականը։ Ժամանակ տանք կազմւելու նոր մինխորութեան և մի քանի խօսք ասենք առհասարակ լրագրական կաշառաւութեան և կաշառակերութեան մասին, կան ասողներ թէ ան ինչ կաշառակերութիւն է իսկապէս որը լատնի է ամենքին, աշկարա է և կատարում է, ապապէս ասած, ամենքի աշքի առաջ, Ո՞ւմ չէ լատնի որ եւրոպական և թիւս որոնց և Պարիից շատ լրագրերի հջերը—որ բաժնում որ կամենաք, կարելի է գնել մի լատնի վճարով և որ տողին տւած 12 ֆրանկը մեծ բան չի համարում։ Պարիզի ցուցանանդէսի ժամանակ ուեկամիների համար վճարում էին տասնեակ հազարներ Ալս ամենը արգելք չի հանդիսանում ալդ իսկ լրագրերի շատ տարածման և դոցա անկախութեան շատ խնդիրներում և որովհետեւ պատգամաւորներից շատ շատերը կապւած են նաև կամ առաւել կերպով լրագրութեան հետ—ապա հասկանալի են և բոլոր վեր վիշեալ ստերաձգութիւնները, որոնք, թերեւս, մասամբ միան արդարացի լինեն, և իրաւ, եթէ թեթև աշքով նաև լուսնք լրագրական կաշառակերութեան վրա—նունը չենք կարող անել պատգամաւորների և կառավարչական գիրք ունեցողների կաշառակերութեան վրա։ Եղել են սրտխօսներ որոնք պնդում էին թէ պարլամենտի 750 անդամներից եօթ հարիւրը բռնում են առնում (prennent) և միմիւան փառանն են ըմբռնում (comprendent).

Նոյն Դըլահէ աջակողմնանը, որի ցուցմոնքի գլաւոր խմասար մենք վերը վիշեցինք, քննիչ լանձնաժողովին ասում էր ի թիւս ալլոց. «Պանամակի ընկերութիւնից՝ ստացած հինգ միլիոն ֆրանկով գործ էին տեսնում երկու հոգի. բառոն Ռաքնախը և նրա մշտական օգնական Առառնը. Առաջինը մոռաւ, երկրորդը փախաւ<sup>1)</sup>։» Նա մոռաւ լուս կիւրակի օրը, իսկ իմ հարցապնդումս պիտի քննուէր պարլամենտում երկու օր առաջ, ան է հինգշաբթի օրոր և նու չէր կարող նախատեսնել նրա վաղահաս մահը... անզ է Առառնը։

ԱԱմբողջ տարի շարունակ նախորդ պարլամենտի անդամները մի քայլախոխ չէին կարող անել որ կուլուարներում չը հանդիպէին ալդ վոքրիկ մարդուն, զգմելի գէմքով, ամենքի հետ ծանօթին, որը շատ պատգամաւորների հետ մտնում էր գաղտնի խօսակցութիւնների մէջ, ինչու էր ալդ մարզը գալիս ան տեղ, — ալդ ամենքը գիտէին և երբ մի նոր ընտիր պատգամաւոր հարցրեց թէ դա ո՞լ է, նրան պատասխանեցին՝ դա Պանամակի մարդն է (c'est l'homme de Panama.)։

<sup>1)</sup> Ակա ցուցմոնքից մի քանի օր անցած Առառնը վերագարձաւ և իրան ձեռքակալել տեսց։

Ազնուհետև բացատրելով թէ ինչ բան է չեկը և չեկի տեսրակը, Դըլահէն շարունակեց:

«172 Հաստ ադրբիսի չեկերից բաժանաւած են եղել քաղաքական գործիններին, Ակս լուրերը կատոնի են ամբողջ Պարիզին, Սոսկ աղջ լուրերը շոշափում են պարլամենտի պատիւը»

Հրաւիրեցէք Խօթ հարիւր կիսուն պատգամաւորներից որին և կամենաք և հարցրէք նրան՝ արդեօք իրու է որ պարլամենտի կուլուառներում լուրեր էին պատում Պանամակի ընկերութեան ձեռքով ձեր մի քանի ընկերներին կաշտուելու մասին, Եւ աղջ 750 պատգամաւորներից ամեն մէկը ձեզ կը պատասխանի՞ ալո՛, իրաւ է»

Մեր երեք հարիւր սենատորները թերմա նման պատասխան տանու,

Ապա Դըլահէն պատմեց քննիչ լանձնաժողովին պատող այն բացատրութիւնը թէ ինչու մեռաւ Ռախնախը,

«Ռախնախը բնրում է մինիստրին մի ցուցակ այն բոլոր անձանց անուններով որոնք կաշառ են կերել — ապացուցանելու համար թէ անհնարին է ամենքի զէմ դատ բաց անելը, Մինիստրը վեր է առնում ալդ ցուցակը և իւր մօտ պահում առանց վերադարձնելու<sup>1</sup>», «Ոչ ալս լուրերը և ոչ էլ անձերի ցուցակը ապացուցներ չեն, շարունակեց Դըլահէն, ապացուցները — չեկերն են, որոնցով փողեր են ստացւել և որոնց գտնելովը՝ կոնճնաք ապացուցներու»

Ազնուհետև Դըլահէն սկսեց հաստատել որ Առանոնց վճարել է Պանամակի փողերից 300.000 ֆրանկ զանազան անձանց երբ վերջին անզամ հիւսիսակին դեպարտամենտում ընտրում էր Ֆլոկէն — պատգամաւորների ժողովի ներկա նախագահը<sup>2</sup>».

Նա հաստատում էր որ Պանամակի ընկերութեան փողերից վճարած է եղել սենատոր Բառե՛րին 400.000 ֆրանկ,

Նա հաստատում էր որ Պանամակի ընկերութեան փողերով Ֆրեկսինէն դնել է իւր արժէք չունեցող «Տելեգրաֆ» լրագիրը 200.000 ֆրանկով,

<sup>1)</sup> Ակս լուրը կետու բացարւեց ալսակս, Փինանսների մինիստրը Ռ. Վիէ՛ի մօտ գալսէ բառուն Ռախնախը և սրան տանը չէ գտնուած, Իր պատահում են պարլամենտում և գնում արմատականների պարագու, Կլեմանսո՛ի մօտ, Սա լավուում է իւր հիւմերին թէ ինքը անկարող է լրագրերի սկսած արշաւանքի առաջքն առնել, Ապա գնում են Կոնսուանի մօտ — որը նողնանման պատասխան է տալիս և մօտը պահում անունների ցուցակը, Ապա գնում են Գերցի մօտ որը նմանապէս հաստատում է իւր անկարողութիւնը արշաւանքի առաջքն առնելու գործում,

<sup>2)</sup> Ֆլոկէն լետը լաւունել է պարլամենտում թէ ինքը իւր համար ոչինչ չէ վերցրել, իսկ նոր մինիստրութեան կազմելուց լետ հրաժարւել նախագահութիւնից նոր լարձակումների դրդմամը,

Նա վշտում է անուհետե մի ռուս լրագրի անուն որին իբր թէ նմա-  
նապէս փող է եղել տրաւած Պանամալի ընկերութիւնից:

Վերջացնելով իւր խօսքերը Դրլահէն ասաց, «Միայն դուք էք կա-  
րող գտնել ազդ 5 միլիոն ֆրանկերը ևթէ չը գտաք, ասել է թէ նրանք  
քածանւած են եղել, Նախկին պատգամաւորները իրանց արած ցոլքերով  
ապացուցեցին թէ մինչ որ աստիճան իրանք հետաքրքրւած են ազդ բա-  
նում որպէսզի կառկածները կարողանան կենդրոնանալ իսկական մեղաւոր-  
ների զլմինս:

Մերկացումներ անելը շարունակում էին նաև լրագրերը և սրանցից  
երկուսը մանաւանդ շատ էին աքնում. առաջինն է «la Libre Parole»<sup>1)</sup>  
և երկրորդը՝ La Cocarde.

Առաջինի խմբագիրը՝ Դրիմոնը լավանեց որ պատրաստ է իւր լրագրի  
ասածները հաստատել եթէ իրան ազատեն բանտից<sup>2)</sup> Ակս նրա պահանջովը  
նմանատիք նպատակ ընդ արումի դատաստանի և կառավարութեանը  
մէջ մի կողմից և պարլամենտական լանձնաժողովի մէջ միւս կողմից Առաջին-  
ները մերժում էին նրան ազատել իսկ երկրորդը արդ պահանջում էր՝ Դրիմ-  
ոնի ցուցմունքը լսելու համար. Դրութիւնը գնալով աւելի ու աւելի էր  
շփոթաւմ. Ամեն տեղ մութ թէ պարզ ակնարկներ, մնդադրանքներ և ազն,  
Դրութիւնը խճճում էր աւելի ևս լանձնաժողովին տած ցուցմունքներով  
և սոցահարականութեամբ, Խօսում էին նաև այն բանի մասին թէ ընդ-  
հանուր դատախազը բարեկամ լինելով Ռազնախին<sup>3)</sup> ուշացնում էր սրան  
ձերբակալելը, իսկ պարլամենտում եղած վիճարանութիւններից կտու  
խմացնում է բառոնին մասնաւոր նամակով սպառնող վտանգի անխուսա-  
վիմլութեան մասին. Բառոնը երկար տեսակցութիւն է ունենում իւր վիճակ  
ժողեփ Ռազնախի հետ (խմբագիր Ռիմակիւրիկ Ֆրանսիզո<sup>4)</sup> լավանի թերթի),  
իբր թէ ոչնչացնում շատ թղթեր և թունաւորում. Ի դէպ երկու խօսք այս  
երմտագէտ ֆինանսիստի մասին. Սրա հազը ստացել էր ազնականի կո-  
չումը 1866 թին Վիկոոր Էմմանուէլ թագաւորից. Հօր մահից իստոք  
բառոն ծակ դը Ռազնախը թողնում է բանկակին դրազեռնքները մաս-  
հաւոր աւելի խոշոր ձեռնարկութիւններով զբաղելու համար. Նա սիրում

<sup>1)</sup> Ազատ խօսք.

<sup>2)</sup> Նա բանդարկած է, եթէ չենք սխալում, մի զրպարտութեան  
համար ֆրանսիական բանկի գործի առիթալ.

<sup>3)</sup> Բառոնը մի ժամանակ պաշտպանում էր Բուլանժէին և սրա մի-  
նիստրութեան օրով—զօրքին շոկոլադ մատակարարելը լանձնած էր Ռազ-  
նախին. Բայց կտոր սրանք թշնամանում են և կենէ զը Բուլանժուը իւր  
մնդադրական ճակի մեծ մասի կողմինում ընդդէմ Բուլանժէի պարտական է  
բառոնին.

<sup>4)</sup> «Ֆրանսիական հանրապետութիւնու

Էր գեղարւեստ և օպերա, Ալդ ճաշակի համեմատ էլ պալատ էր պահում, Նա ժամանակ էր գտնում մասնակցելու բալետի համար զրքովներ դժմլու, Նրա վերջին «Մալեդիստա» գրւածքը անպէս էլ մնաց չը ներկայացւած,

La Cocarde լրագիրը զրպարառում է հանրապետութեան նախագահ Կառնօ'ի եղբօրը—Աղոլֆ Կառնօ'ին իրը թէ սա ստացած լինի Պանամակի ընկերութեան դրամարկղից 200.000 ֆրանկ, Հետևեալ օրը նոյն լրագիրը տպում է զրպարտւածի ստորագրութեամբ մի խիստ հերքում, ուր ի միջի ալլոց Աղոլֆ Կառնօ'ն լատարարում է որ երբէք ոչ մի դրամական հաշիւ չի ունեցել Պանամակի ընկերութեան հետ:

Յանձնաժողովը շարունակում է իւր գործը—շարունակ նորան որ մարդկանց հարց ու փորձ անելով: Նոյն լրագրում Micros ստորագրութեամբ լողաւճների հեղինակը վկարում է որ 86 թվին իւր կարգադրութեան տակ էր դրուծ 25—30 հազար ֆրանկ Պանամակի ընկերութեան փողերից, «Բոլոր այն պատգամաւորները որանց եւ դիմեցի ան ժամանակ խուլ մնացին փորձերիս առաջնորդ, Անդունետն նա տալիս է շատ պատգամաւորների անուններ, որոնք իրը թէ խառն են Պանամակի գործին ի թիւ սրոնց և նախկին մինիստր Կռնատանի անունը»:

Ռախնախին ընկերակից Առառոնի մասին պատմում են հետևեալը.

Երբ Առառնի ներկայութեամբ պատգամաւորներից մէկը նկատեց թէ պէտք է զգուշ լինել պատգամաւորներին նամակ գրելիս կաշառակերակին գործերի վերաբերեալ Առառոնը նկատեց,

—Ի հարկէ, ալդ խնդիրը շատ է փափուկ, ձեր գրած նամակը կարող է մի զէնք դառնալ ձեր խակ անձի զէմ, նթէ ձեզ պատահելու լինի աղպահիսի զէպք—հետեւեցէք ապ խորհրդիս, գրելիս՝ աշխատեցէք անպատճառ ձեզ արատաւորող դարձւածը կապէլ ձեր թղթակցին էլ արատաւորող մի բանի հետ, Վաստահ եղէք որ ձեր գրած նամակը նա չի ցաց տալ ոչոքի, ևս հէնց աղպէս էլ անում միշտ:

Էցգար լրագիրը ալս հաղորդելով ամելացնում է, և իրաւ մինչ օրս ոչ մի նամակ չէ լատանել որ գրւած լինի Առառնի ձեռքով:

Անցնենք ալժմ նոր մինիստրութեան կազմակերպելուն,

Քրիստոնը որը մեղաստ էր Լոււրէ-Բիթօ-Ֆրելսինէ մինիստրութեան անկման—անկարող եղաւ նոր մինիստրութիւն կազմելու, Տաղնապը տևեց մի շաբաթից աւելի մինչև որ կազմեց Բիթօ-Լոււրէ-Ֆրելսինէ մինիստրութիւնը, ասել է թէ գրեթէ հին մինիստրութիւնը, միան թէ նախապահութեամբ Բիթօ'ն և բացառութեամբ Ռիկառի, որի տեղը բանեց Բուրժուան, Դեկտեմբեր 6-ին կազմած նոր մինիստրութիւնը ներկայացւած պատգամաւորների ժողովին առաջին անդամ դեկտեմբեր 9-ին (Ն. տ.),

Մինիստր նախագահ Ռիթօ'ն ուժեղ ձախով կարգաց նոր մինիստրութեան լատագիրը, որից քաղում ենք նշանաւոր կտորները,

ավատեղ, ամբիոնից, լաւտարարւեցան ծանր մեղադրանքներ, որոնք ոչ միայն երկու ատեանների շատ անդամների պատուին էին շոշափում, այլև անբարելվակել ստուբ էին դցում նոյն խակ աղդավին ներկաւացուցչական սկզբունքի վրա (ձախ աթոռների վրա՝ շատ լաւ), Դուք լանձնաբարել էք քննիչ լանձնաժողովին խուզարկել և հրատարակ կացուցանել թէ մինչ որ աստիճան հիմնաւոր են այդ մեղադրանքները, Մենք համոզած ենք որ համերաշխ համաձաւ ձաւ ձաւ էն ու թիւնը քննիչ լանձնաժողովի և կառավարութեան մէջ կը փակի խոկութեան կատարեալ մերկացումով, (Շատ լաւ).

Մենք համոզած ենք նմանապէս որ ալդ համաձակնութիւնը չի ունենալու իրբ հետեանք այն սկզբունքների քականելը, որոնք նմանապէս թանգ են մեզ համար և որոնց պաշտպանութեան համար մենք չենք խնացելու ոչ մի ջանք (կենդրոնում՝ շատ լաւ).

Պարոններ, մատնաւոր անհատների մեղքերը ոչ այլ ինչ են եթէ ոչ մասնաւոր երեսով մնեած ազգի շխտակ և աշխատասէր կեանքի մէջ, «Ծափահարութիւններ»),

Անուհետև թւելով պարլամենտի հերթական գործերը, Թիրո՞ն շարունակեց.

«Ֆրանսիական ռամկապետութիւնը գնահատել է արդէն ըստ արժանուն այն զրագրատութիւնը որ կուսակցական հոգին ուզում է բարձել մեր հատաստութիւնների վրա (ձախ՝ շատ լաւ, աջ՝ աղմուկ, ձախ և կենդրոնում՝ ծափահարութիւններ):

«Նա հասկանում է որ հանրապետութեան պատիւը պահանջում է լուութեան չը տալ սկանդալի բնաւորութեան արարքները և թուլութեան արտակաւութիւնները, որոնք չեն կարող ոչ մի ստմբ զցել հանրապետութեան վրա և որոնցից նա զուրս կը բերի զերագոյն բարողականութեան մի զամանակակիցները» (Ծափահարութիւններ):

«Եղէք անողոք դէպի կատարւած սխալները, բայց միք բնեռիլ ձեր հափացքները չնշնի երեսովների վրա ալ շարունակեցէք ձեր ընթացքը դէպի առաջ բարձր պահելով ձեր զլուխները (ծափահարութիւններ) ինչպէս որ ալդ վակել է մի մնեած ազգի ներկաւացուցիչներինո».

Մինուն ժամանակ նոր մինիստրութիւնը համաձակնութիւն տևց բառոն Ռախնախի թաղած մարմինը գերեզմանից հանելու դիազնութեան համար նաև զմուելու բառոնի բալոր թղթերը Ընդհանուր գատախաղ Բոռ-ակենուր, որը շարունակում էր մերժել խուզարկող պարլամենտական լանձնաժողովին դատաստանական խուզարկութեան հեքեանքների լաբո-նելը—արդարադատաւութեան նոր մինիստր նորմանից սահցաւ ուրիշ աւմբի բարձր դատաստանական պաշտօն։ Նոր մինիստրութիւնը կարդացաւ կարգադրել երկու լշխանութիւնների, այս է զատաստանականի և պարլամենտական լանձնաժողովի մէջ առաջ եկած ընդհարումը, Օրէնքի իրը կողմանակիցները հիմնում էին երկու կտերի վրա պնդելով որ 1) օրէնքը

արգելում է հրապարակ հանել դատաստանական խուզարկութեան արդիւնքները և 2) դատաստանի պարտաւորութիւնն է պաշապանել մնջադրւած ների շահերը:

Առաջին կէտի մասին արդարադատութեան նոր մինիստրը Բուրժուան ան միտքը լավունեց, որ պարլամենտական քննիչ լանձնածողովը պէտք է նկատվի իրը կառավարչական մի օրգան Գալով երկրորդ կէտին նոր մինիստրը Բուրժուան Պանամալի ընկերութեան վերաբերեալ բոլոր թղթերը բաժանեց երկու կարգի. առաջին կարգի թղթերը (թղթեր, գոկումնութեան—դոքա են՝ Պանամալի ընկերութեան դակումենտները) Բուրժուան վճռեց դնել պարլամենտական լանձնածողովի անսպալման կարգադրութեան տակ, Երկրորդ կարգի թղթերը (թղթեր, որոնք վերաբերութիւն ունին մեղադրաւածների պաշտպանութեան հետ) Բուրժուան վճռեց այն շափով միան լավունի դարձնել պարլամենտական լանձնաժողովին—ինչ չափով որ դա չի վնասիլ մեղադրաւածների շահերին:

Մեղադրաւածներին դատապարտելու համար նոր մինիստրութիւնը հիմք ընդունեց ֆրանսիական քրէական օրէնքներից երկու կէտ այն է կէտ 177 և 179. Առաջին կէտը պաշտօնեաներին և պատգամաւորներին է վերաբերում. սոցա կողմից ընծաներ և խոստումներ ստանալու ահապիսինից, որոնք դրա մէջ շահ ունին, Երկրորդը, այն է 179 կէտը, նոցա մասին է, որոնք ընծալ կամ խոստումներ են անում պաշտօնեաներին ու պատգամաւորներին. Ագդ կէտերի հիման վրա, եթէ նաև տեղի է ունեցել կաշուակերութիւնը, մեղադրաւածները զիկում են թէ մի քանի քաղաքական իրաւունքներից, թէ բանտի ենթարկում տասը տարւակ ժամանակամիջոցով և թէ սուպանքի տակ զցում:

Պարլամենտական քննիչ լանձնածողովին տեսլ են իրանց ցուցմունքները. ի թիւ ազոց՝ նախկին նախագահ Ժիվ Գրեւիի եղբարը—Ալբեռ Գրեվի՝ 25.000 ֆրանկ սոտացած լինելու մասին, բուլանժէական Նակէ պատգամաւորը, Էրաւառը՝ «Temps» լրագրի խմբագիրը՝ Պանամալի ընկերութիւնից մօտ  $1\frac{1}{2}$  միլիոն ֆրանկ ստանալու մասին, ֆինանսների նախկին մինիստր Ռուպիէն, արմատականների պարագլուխ և «Jasmin»<sup>1)</sup> լրագրի խմբագիր՝ Ալեմանսոն, նախկին մինիստր Կոնստանը, Շեւիլիառը՝ մի պաշտօնեակ դինամիտակին ընկերութիւնից նախկին և ալժմ վախճանած մինիստր Բառքի համար 550.000 ֆրանկ<sup>1)</sup> սոտացած լինելուն մասին և ալն, և ալն.

<sup>1)</sup> Ալդարագատատութիւն, արդարութիւն:

<sup>1)</sup> Պանամալի ընկերութիւնը առաջ դինամիտը ձեռք էր բերում Քելիխալում, բայց լետու ֆրանսիական դինամիտակին ընկերութեան լարձակումներից ազատանելու համար սոխուղմցաւ որան դիմել և սրա նշանակած դներու ֆրանսիական դինամիտ գործածել:

Ամեն մի օրը մի նոր լուր է բերում. այժմ խօսում են մի Գերցի մասին, որը ներկապրամն նստած է Լոնդոնում և որը իր թէ ստացել էր Ռազմախից և բաժանել իրը կաշառք մօտ և միլ. Գրանկ:

Տեղի ունեցած զրաբարտութիւններից արձանագրենք նաև ալս մէկը. «La Cocardie» լրագիրը զրաբարտեց ի թիւս ալլոց հանրապետութեան նախագահի եզրաքարը—Ազգով Կարնո՛յն, Վերջինն, որը լաւոնի է գիտնական աշխարհում իւր աշխատութիւններով քիմիալի, միներալոգիալի և գեոլոգիալի վերաբերեալ, մի ենթքում պատասխան ուղղեց նոյն լրագրին:

Լրացրական վերջին հեռագիրները տեղեկացրին, որ դատի են կանչւած հինգ պատգամաւորներ և հինգ սենատարներու Առաջինների անուններն են՝ Ռուպիէ, Ժիւլ Ռոշ, Արեն, Անտոնին Պրուատ, Դիտգէ զը լա Ֆակոն ների, Արկրորդների անուններն են Լէսն Ռենօ, Ալմե, Գրեվի, Դիւրեւ Տելվընէ, Դմւմա:

Նոր մինիստրութեան կազմելովը սական չը դադարեցին պարլամենտական զանազան հարցապահումներ և ասկածի տակ գցւած ֆինանսների մինիստր Ռուպիէն հրածարեց իւր պաշտօնից տեղ տալով Տիուարին, Ասացինք արդէն որ հրաժարեց նաև պատգամաւորների ժողովի նախագահ Ֆլոկէն, Տեղի ունեցան նաև մի քանի անհետեանք մինամարտութիւններ:

Մենք ալասեղ կանգ ենք առնում մի երկու-երեք խօսք ասելու:

Մի կողմ թողնելով այն հարցը թէ մինչ որ աստիճան անխուսափելի է կաշառատութիւնը զանազան ձեռնարկութիւններում և այդ չարիքի չափը ներկալ չարաբազդ գործում,—մենք կանգ կառնենք կաշառակերութեան վրա. Մենք հակած ենք կարծելու, որ մեղաղրանքները և զրաբարտութիւնները չափից դուրս չառ են խոշորացրւած, Ոչ մի ազդ աշխարհին երեսին զուրկ չէ տպեղ կողմներից և սական ոչ մի ազդ չունի պատուզացութեան այն բարձր աստիճանը, որը լատուկ է միմիան և միմիան ֆրանսիացիններին. Մենամարտութիւնը ամենից շատ լարգւած է Ֆրանսիական արքունիքի և արքունիքի արքունութիւնը և եղած կուսակցութիւնների շատութիւնները, հանգամանքներ, որոնք արթուն են պահում հասարակաց կարծքը—հրապարակ հանելով ամեն մի կուսակցութիւնների շատութիւնները:

Դարսաւ վերջերքի հանգին ալդ սկանդալը աւելի հաւանական է, որ քաղաքական և ենտրիգալին աստառ ունենալ. քսան տարուց աւելի է, ինչ որ ներկալ ֆրանսիական երրորդ հանրապետութիւնը պատաւոր կերպով առաջ է ընթանում պրոգրեսի շաւով և աւելի ու աւելի համակարգութիւն ձեռք բերում ամենքի: մօտ նոյն իսկ ալս սկանդալի օրակը Մենք կրութիւն ձեռք բերում որ մեր մասնացոց արած հանգամանքները—են հակւած ենք կարծելու որ մեր մասնացոց արած հանգամանքները—են հակւած պատճառները ալս հականարարեական արշաւանքին թերևութիւն:

մի կոմից ստերում մնացած և գրեթէ մոռացւած հականանրապետական կոռակցութիւնների վերջին ցնցումները լինեն ալս սկանդալների երևան հանելը և միւս կողմից թերեւս փորձեր այն փառասէր հանրապետականների որոնք ալսպէս թէ այնպէս ետ էլին մղւել առաջնակարգ դիրքերից թէ շնորհիւ իրանց անընդունակութեան և թէ վտանգաւոր համարւած փառասիրութեան։

Շատանաք առալիմ մէջ բերելու «Séecle» և «Parti National» թերթերի լալտնած մտքերը. «Բոլոր խալտառակ մերկացումները մեզ գալիս են արտասահմանից. արշաւանքից առաջ Դելահէն զնացել էր Հոռմ, Մորեսը—Թրիստել, Անդրիէն—Լանդոն, Ալս բոլոր ճանապարհորդութիւնները ունեն մի ընդհանուր նպատակ, մի ընդհանուր նախագիծ, Դիտէ արդեօք կառավարութիւնը թէ մինչ որ աստիճան է արդէն կազմակիրապւած աղդ նախագիծը, ժամանակը չը արդեօք գործ տեսնել ալդ դաւադիրների հետ, որպէս զի հասարակութիւնը, ժողովուրդը, ազգը իմանում լինի որ սխիստ բարոլականութեանո պատրւակի տակ թագնւած է մի ինչ որ է կասկածելի խնտրիդաէ որի ծալքերը տարածւած են Ֆրանսիակի սահմաններից դուրս։

Վերջին լուրերի համաձախն Փրանսիացիք աշխատսւմ են ջանալ գլուխ բերմէլ Պանամակի ջրանցքի գործը քանի որ վախ են կրում մի զուցէ անգլիացիք զանազան պատրւակների տակ իրանց ձեռք գցն ամրող գործը. Սուեցի ջրանցքի ընկերութեան ներկաւ վարչութիւնը բազկացած է 18 Փրանսիացիներից, 10 անգլիացիներից և 2 բելգիացիներից.

Հեռագիրը իմացնում է որ Ֆլոկէ'ի տեղը բռնեց կազիմիո. Պերիէն և որ Ռիբօ'ի մինխատրութիւնը մասնաւոր խորհրդից կատու վճռեց կազմափոխակ անպէս, որ Լուքէ'ն և Ֆրեզինէն պաշտօններ չը պիտի ստանձնեն նոր մինխատրութեան մէջ։

Նոն լուրերի համաձախն իբր կաշառք գործածւածի գումարը հասում է 350-ից 400 միլիոն ֆրանկի։